ArmLur.am

I SSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

# Ժողովուրդ

19 սեպտեմբերի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

131 (2797)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

## ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ՄԱՐԻԱՄ ԵՎ ԱՇՈՏ ՓԱՇԻՆՅԱՆՆԵՐԸ





Սեպտեմբերի 17-ին Երեւանի ավագանու ընտրություններն էին: ԿԸՀ հաղորդած նախնական տվյալներով՝ որեւէ ուժ, այդ թվում՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը, չի հաղթահարել 50%-ի շեմը, ըստ այդմ՝ միանձնյա չի կարող քաղաքապետ ունենալ: Իշխող ուժի թեկնածուին՝ Տիգրան Ավինյանին, աջակցում էր նաեւ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, որը, մասնավորապես, քարոզարշավի եզրափակիչ օրը նրա հետ քայլերթի մասնակցեց ու բեմից բարձրագոչ ելույթներ ունեցավ: Արդեն սեպտեմբերի 17-ի վաղ առավոտյան կնոջ հետ գնաց իր քաղաքացիական պարտքը կատարելու: «Ժողովուրդ» օրաթերթի աչքից չվրիպեց, որ «Երրորդ մաս»-ում՝ 8/16 ընտրատեղամասում, Փաշինյանի հետ քվեարկում էր նաեւ Աննա Հակոբյանը, չնայած որ գրանցված է Կենտրոն վարչական շրջանում ու պիտի քվեարկեր Կենտրոնում՝ 9/18 ընտրական տեղամասում: Ինչ վերաբերում է վարչապետի երեխաներին, ապա Մարիամի քվեարկելու տեղամասը պաշտոնապես 9/18-ն էր, եւ, ըստ պաշտոնական տվյալների, վարչապետի հետ պետք է քվեարկեր որդին՝ Աշոտը, որը գրանցված էր 8/16-ում: Հարց է առաջանում՝ որտե՞ղ քվեարկեցին վարչապետի զավակները: Մարիամ եւ Աշոտ Փաշինյանները մինչեւ ուշ գիշեր ՔՊ շտաբում էին: Հավելենք նաեւ, որ միեւնույն ժամանակ Մարիամ Փաշինյանը ինստագրամյան իր էջի «Սթորի» բաժնում տեղադրել էր լուսանկարներ եւ վիդեոներ, որտեղից պարզ է դառնում, որ Աշոտն ու Մարիամը կիրակի օրը՝ սեպտեմբերի 17-ին, հանգիստ են անցկացրել Հայաստանի գեղատեսիլ վայրերում: Ընտրական ցուցակների պաշտոնապես հրապարակումից հետո «Ժողովուրդ» օրաթերթը կտեղեկացնի՝ արդյոք Փաշինյանների ընտանիքից ընտրական իրավունք ունեցող բոլոր անձինք են քվեարկել ու աջակցել «Քաղաքացիական պայմանագրին»:



Աշխարհի ամենատարածված ու սիրված սպորտաձեւը համարվող ֆուտբոլը շատ երկրներում հանդիսանում է քաղաքական լուրջ գործոն. երկրի ղեկավարները փորձում են լավ հարաբերություններ պահպանել ֆուտբոլիստների, ակումբների եւ ֆանակումբների հետ: Հայաստանում 2018թ.-ին իշխանության գալուց հետո աշխարհի ամենահայտնի ՀՀ քաղաքացի Հենրիխ Մխիթարյանին զրկեցին դիվանագիտական անձնագրից, ապա հասան նրան, որ իտալական «Ինտեր»-ի աստղը հրաժարվեց գալ ազգային հավաքական: Մեր աղբյուրները պնդում են, որ Մխիթարյանի ու իշխանությունների հարաբերությունները խառնելու գործում մեծ ազդեցություն է ունեցել ֆեդերացիայի ներկա նախագահ Արմեն Մելիքբեկյանը, որը, Նիկոլ Փաշինյանին լարելով Մխիթարյանի դեմ, հակասական տրամադրություններ է ստեղծել Հենրիխի հազարավոր երկրպագուների մոտ՝ ուղղված իշխանություններին: Այսքանով, սակայն, իշխանություններին վնաս տալու սեփական «առաքելությունը» Արմեն Մելիքբեկյանը չավարտեց. անդադար ուղեկցելով տարբեր միջոցառումների Նիկոլ Փաշինյանին ու նրա մերձավոր շրջապատին, ցույց տալով իր եւ այս իշխանությունների անքակտելի կապը՝ Մելիքբեկյանը սկսեց գրեթե «ահաբեկչական գործողություններ» անել Հայաստանի ամենատիտղոսակիր թիմի՝ «Փյունիկ»-ի նկատմամբ: Բանը հասավ նրան, որ հազարավոր երկրպագուներ ունեցող թիմին զրկեցին իրենց պատկանող մարզադաշտերում խաղալու իրավունքից, իսկ այս թիմը ոչ միայն հազարավոր երկրպագուներ ունի, այլեւ հարյուրավոր երեխաներ են պարապում նրա ակադեմիայում, որոնց շրջանում եւս հակաիշխանական տրամադրություններ բորբոքեց: Դեռեւս պարզ չէ՝ այս ամենը Արմեն Մելիքբեկյանն արել է դիտավորյալ, թե զուտ անձնական հաշիվներ է ունեցել, սակայն այն, որ Երեւան քաղաքում իշխանությունների կողմից ոչ բավարար ձայներ հավաքելու գործում ունեցել է զգալի ազդեցություն, քննարկման ենթակա չէ:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Երեւանի ավագանու ընտրություններից հետո ՔՊ վարչության նիստը երեկ շատ թեժ է անցել. ՔՊ-ականները փոխադարձ մեղադրանքներ են հնչեցրել միմյանց հասցեին, փորձել են մեղավորներ գտնել ավագանու ընտրությունների ձախողման համար: Նիկոլ Փաշինյանը ասել է, որ մեղավորները պետք է պատժվեն, քանի որ իր թիմակիցների անգործությունն է պատճառը, որ այս վիճակին են հասել եւ Երեւանում վարկանիշ չունեն այլեւս: ՔՊ-ականները երկարատեւ քննարկումների արդյունքում եկել են եզրահանգման, որ այս պատկերի իրական պատճառը ոչ ճիշտ կադրային քաղաքականությունն է, քանի որ կառավարության մի շարք պաշտոնյաներ տեղում չեն ու անգործության են մատնված: Առաջիկայում մի շարք պաշտոնանկություններ են սպասվում, ասել է թե՝ կադրային ջարդի գործընթացը մեկնարկում է: «Ժողովուրդ» օրաթերթն առաջինն էր գրել, որ ավագանու ընտրություններից հետո այն նախարարները, որոնք անգործության են մատնված, հրաժեշտ կտան իրենց պաշտոններին: Նրանց թվում են Գնել Սանոսյանը, Հակոբ Սիմիդյանը, Նարեկ Մկրտչյանը եւ Գրիգոր Մինասյանը: Ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, ՔՊ-ականներն ավագանու ընտրությունները մեծ հարված են համարում իրենց վարկանիշին, քանի որ «50+»-ի ակնկալիքներ են ունեցել: Հիմա այս իրավիճակից որպես ելք դիտարկում են կոալիցիայի կազմումը, իսկ նրանց հույսն այս պահին Արամ Սարգսյանի «Հանրապետություն» կուսակցությունն է, քանի որ անցողիկ շեմը հաղթահարած միակ ուժն է, որ կոալիցիա կկազմի իշխող ուժի հետ: ՔՊ-ականները հույս ունեն, որ այսկերպ գոնե կկարողանան իրենց թեկնածուին քաղաքապետ ընտրել, եթե անցած մյուս ուժերից կարողանան 2 ավագանիներ «պոկել»: Վարչության նիստից հետո ՔՊ-ականներին հասկացրել են, որ կատարվածը դաս պետք է լինի իրենց համար, ու այսուհետ ամեն բան այլ է լինելու: Օրվա վերջում միայն Ավինյանը խորը դեպրեսիայից հետո շնորհակալություն հայտնեց իր ընտրողներին, ՔՊ-ն էլ խոստացավ ավելի ուշ տեսակետ հայտնել:



Հայաստանի խորհրդարանի վերանորոգման եւ «ռեստավրացիայի» աշխատանքներում նաեւ իրանցիներ են ներգրավված: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ ողջ ամառ ԱԺ-ում բուռն վերանորոգումներ են ընթացել. բացօթյա սրճարանի համար տարածքն է կառուցվել, հանձնաժողովների նիստերի համար նախատեսված սենյակներն են վերանորոգվել, այս օրերին էլ հայրենի խորհրդարանի վերելակներն են փոխվում: «Ժողովուրդ» օրաթերթը երեկ խորհրդարանում նկատեց, որ վերանորոգման գործընթացում նաեւ մի խումբ իրանցիներ են ներգրավված: ԱԺ հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչության պետ Լաուրա Անտոնյանը մեզ հետ զրույցում հաստատեց տեղեկությունը՝ պարզաբանելով՝ «Արեւ-Լույս-Կասկադ» մասնագիտացված վերելակային ընկերությունը մասնակցել է էլեկտրոնային աճուրդին եւ ամենացածր գինն է առաջարկել ԱԺ-ի վերելակները փոխելու համար, հետեւաբար շահել է տենդերը. «Այդ ընկերությունը նաեւ վերելակների արտադրությամբ է զբաղվում, նրանց մոտ երկու իրանցի մասնագետ կա, որոնք տեխնիկական աշխատանքներում են ներգրավված, որպեսզի տեղադրման հետ կապված խնդիրներ չլինեն: Բացի երկու իրանցի մասնագետներից, կազմակերպությունն ունի նաեւ 6 հայ աշխատակիցներ, այսինքն՝ ընդհանուր 8 հոգով են վերելակները տեղադրում»:

ԶՐՈՒՅՑ

# ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏՎԵՑ, ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉՀԱՂԹԵՑ

**Սեպտեմբերի 17-ին տեղի ունեցան Երեւանի ավագանու ընտրությունները: Ավելի ուշ ԿԸՀ-ն հրապարակեց ընտրությունների նախնական արդյունքները, ըստ որոնց՝ որեւէ ուժ չի հաղթահարել 50 տոկոսը, այսինքն՝ չի կարող միանձնյա քաղաքապետ ընտրել: «Ժողովուրդ» օրաթերթը ընտրության արդյունքների առաջացրած ներքաղաքական ու արտաքին քաղաքականության մեջ հավանական խնդիրների, կոալիցիա կազմելու հավանականության, արտահերթ ընտրությունների գնալու եւ հավանական այլ ելքերի մասին զրուցել է քաղաքագետ Արմեն Բաղդասարյանի հետ:**



**-Պարոն Բաղդասարյան, ներքաղաքական ի՞նչ խնդիրների կարող են հանգեցնել քաղաքապետի ընտրությունների այսպիսի արդյունքները:**

-Դա կախված է նրանից, թե ով կընտրվի, ի վերջո, քաղաքապետ: Եթե փորձենք տաք հետքերով ամփոփել ընտրության արդյունքները, ապա կարելի է ասել, որ դրանք ցույց տվեցին, որ իշխող քաղաքական ուժը՝ «Քաղաքացիական պայմանագիր»-ը, պարտվեց, բայց ընդդիմությունը չկարողացավ հաղթել: Այսինքն՝ ընդդիմությունը չկարողացավ հաղթել մի ուժի, որի օգտին քվեարկել է քաղաքացիների շատ չնչին տոկոսը: Ամենայն դեպքում, հավանականությունը որ ընդդիմությունը կկարողանա քաղաքապետ ընտրել, շատ քիչ է՝ գրեթե զրոյական: Հետեւաբար դեռ վաղ է ասել, թե ՔՊ-ն կորցնում է քաղաքապետի պաշտոնը: Տարբեր սցենարներ կարող են լինել. օրինակ՝ իշխող ուժը կարող է մեկ-երկու հոգու իր կողմը քաշել ընդդիմությունից, եթե չկարողանան ձեւավորել կոալիցիա՝ ընդդեմ ՔՊ-ի, իսկ տպավորությունը հենց այդպիսինն է: Այս պարագայում որեւէ մեկը քաղաքապետ չի ընտրի, քաղաքապետի պաշտոնակատարով կամ այլ մեխանիզմներով այս իրավիճակը կլուծվի: Ամեն դեպքում, հավանականությունը մեծ է, որ քաղաքապետի թեկնածուն իշխող ուժի ներկայացուցիչը պետք է լինի:

Այլ հարց էր, որ սա լուրջ քաղաքական ապտակ էր ներքաղաքական կյանքում այն առումով, որ, այո՛, հնարավոր է ընտրություններով փոփոխության հասնել ներքաղաքական կյանքում: Պարզ ասած, ընտրություններին ՔՊ-ի անպարտելիության փուչիկը պայթել է:

**-Պարոն Բաղդասարյան, ասում են, որ Մարությանը «ռուսական ֆիգուր է»: Եթե ընդդիմադիր ուժերը կոալիցիա կազմեն Մարությանի հետ, ի՞նչ եք կարծում, ի՞նչ ազդեցություն կամ հետեւանքներ կունենա ներքին եւ արտաքին քաղաքական կյանքում:**

-Ես «եթե»-ներով չեմ ուզում առաջնորդվել, որովհետեւ վստահ եմ, որ այդպիսի կոալիցիա չի ձեւավորվի, քանի որ ներկայացված են երեք այնպիսի ուժեր, որոնց միջեւ կան մի շարք տարաձայնություններ, եւ իրենց միջեւ ձեւավորված կոալիցիան ես բացառում եմ: Դրա համար էլ ասում եմ, որ իշխող քաղաքական ուժը պարտվեց, բայց ընդդիմությունը չհաղթեց:

**-Իսկ այս ընտրությունները արտաքին ինչպիսի՞ վտանգներով են հղի Հայաստանի համար:**

-Այստեղ ես կապ չէի ցանկանա տեսնել, ինչքան էլ որ քաղաքական տարբեր ուժեր փորձում էին արտաքին քաղաքական հետքը կամ ճնշումները կարեւորել, բայց դա ուներ քարոզչական նպատակներ միայն: Ուղիղ կապ այստեղ չկա: Միակ միջնորդավորված կապը կարող էր լինել այն, թե արդյոք հնարավոր էր իշխանափոխություն՝ Երեւանի քաղաքապետի ընտրություններով պայմանավորված:

*Զրուցեց ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԸ*

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ՈՒԺԵՐԸ ԿՈԱԼԻՑԻԱ ԿԿԱԶՄԵ՞Ն

**«Հանրապետություն» կուսակցությունը չի բացառում հետընտրական կոալիցիան իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության կամ ընդդիմադիր ուժերի հետ՝ բացառությամբ «մերձդաշնակցական» եւ «ռոբասերժական» ուժերի:**

Ինչպես արդեն «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, երեկ տեղի ունեցած ավագանու ընտրությունների արդյունքում անցողիկ շեմը հաղթահարել են 5 ուժ՝ «Քաղաքացիական պայմանագիրը», «Ազգային առաջընթացը», «Հանրապետությունը», «Հանրային ձայնը» եւ «Մայր Հայաստան» դաշինքը:

Այս ուժերից որեւէ մեկը, սակայն, չի հավաքել 50 եւ ավելի ձայն, ուստի չի կարող միանձնյա քաղաքապետ ընտրել. անհրաժեշտ է կոալիցիա կազմել:

«Մայր Հայաստան» դաշինքը եւ «Հանրային ձայն»-ը հայտարարել են, որ բացառում են կոալիցիան իշխող ուժի հետ, «Ազգային առաջընթաց» կուսակցությունը դեռ «լռում է»:

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում «Հանրապետություն» կուսակցության ցուցակի անդամ Անի Խաչատրյանը նշեց, որ դեռ հետընտրական կոալիցիա կազմելու հարց չեն քննարկել, բայց չեն բացառում կոալիցիան ՔՊ-ի կամ ընդդիմադիր ուժերի հետ.

«Մենք վստահ էինք, որ երեւանցին այնպիսի գիտակից ընտրություն կկատարի, որ Արտակ Զեյնալյանը 50+ ձայնով կընտրվի քաղաքապետ, եւ կոալիցիա կազմելու հարց չենք քննարկել, բայց կարող եմ ասել, որ բացառում ենք կոալիցիան «մերձդաշնակցական» եւ «ռոբասերժական» ուժերի հետ, նաեւ այն ուժերի հետ, որոնք Հայաստանը տեսնում են Ռուսաստանի գուբերնիայի կարգավիճակում: Այլ ուժերի հետ կոալիցիայի հարց չենք քննարկել»,- ասաց նա:

«Մայր Հայաստան» դաշինքի առաջնորդ Անդրանիկ Թեւանյանն էլ հնարավոր կոալիցիայի մասին վերջնական որոշման դեպքում հանդես կգա հայտարարությամբ:

Այս մասին ՁԼՄ-ին հայտնել է «Մայր Հայաստան» դաշինքի անդամ Մանուկ Սուքիասյանը՝ նշելով, որ շուտով ամեն բան պարզ կլինի:

Հիշեցնենք, որ ընտրությունների վերջնական արդյունքներով՝ «Հանրային ձայն» կուսակցությունը ստացել է 9.68%, «Ազգային առաջընթաց» կուսակցությունը՝ 18.89%, «Մայր Հայաստան» դաշինքը՝ 15.43% ձայն:

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ «Հանրային ձայն» կուսակցության ղեկավար Վարդան Ղուկասյանը հայտարարել էր, որ իրենք պատրաստ են կոալիցիա կազմել «Ազգային առաջընթաց» կուսակցությունը գլխավորող Հայկ Մարությանի եւ «Մայր Հայաստան» դաշինքը գլխավորող Անդրանիկ Թեւանյանի հետ:

*ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ*

## ԻՐԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ ՉԻ ԼՈՒԾՎՈՒՄ

2023 թվականի սեպտեմբերի 8-ից 10-ը շրջակա միջավայրի նախարար Հակոբ Սիմիդյանը գործուղվել է Իրանի Իսլամական Հանրապետության մայրաքաղաք Թեհրան՝ մասնակցելու ավազի եւ փոշու փոթորիկների դեմ պայքարի միջազգային համաժողովին: Հանդիպմանը մասնակցել են ավելի քան 50 երկրների ներկայացուցիչներ: Հանդիպման ընթացքում անդրադարձ է արվել նաեւ Արաքս գետի ավազանում բնապահպանական իրավունքների ապահովման եւ իրանական կողմի հետ գործակցության խնդիրներին: Այսինքն՝ պայմանավորվել են Արաքսին վերաբերող բնապահպանական խնդիրները լուծել միասին: Այո՛, թվում է, թե հենց այդպես էլ պիտի լիներ, սակայն կա մեկ բացթողում. ինչպե՞ս է Հակոբ Սիմիդյանը քննարկումներ կատարում ավազի եւ փոշու փոթորիկների դեմ պայքարի վերաբերյալ, երբ Հայաստանում փոշու փոթորիկներ երբեւէ չեն գրանցվել: Իհարկե, Հայաստանն այժմ կանգնած է ոչ թե փոշու փոթորիկի ռիսկերի, այլ փոշու ամպերի պատճառով բնապահպանական եւ առողջապահական լուրջ խնդիրների առաջ: Վերջին 5 տարիների ընթացքում Հայաստանում մեծ թափով ավելացել են նորակառույցները, որոնք հանգեցրել են լուրջ խնդիրների: Եթե որոշ ժամանակ առաջ Երեւանի ցանկացած հատվածից կամ բարձրահարկ շենքերից արեւածագից մինչեւ մայրամուտ երեւում էր Արարատ լեռը, ապա այսօր, բացի սպիտակ ամպերից, ոչինչ չենք տեսնում: Սրա պատճառը բնապահպանական խնդիրների նկատմամբ ցուցաբերած անլրջությունն է, մետաղի ջարդոն ավտոմեքենաների փոխարեն, շինթույլտվություններ բաժանելն է, ռեսուրսների ոչ ճիշտ օգտագործումը: Երեւանում փոշու աղտոտվածության մակարդակը 2022 թվականին՝ հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, հուլիս եւ դեկտեմբեր ամիսներին, մի քանի անգամ հատել է կարմիր գծի շեմը: Սա՝ միայն Երեւանում. Ծաղկաձոր, Աբովյան եւ այլ քաղաքներ եւս ընդգրկվել են բնակարանաշինության խոշոր ծրագրերում, եւ վաղեմի զբոսաշրջային քաղաք Ծաղկաձորը վերածվել է մեծ շինհրապարակի: 2022 թվականին փոշու աղտոտվածությունը 31%-ով գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան: Հավելենք նաեւ, որ վերջին տարիներին Շրջակա միջավայրի նախարարությունը փոշու աղտոտումը վերահսկելու համար ոչ մի գնում չի կատարել: Հաջորդ բացթողումը. ինչպե՞ս է ստացվում, որ Արաքս գետի բնապահպանական խնդիրները լուծելու համար Սիմիդյանը հանդիսավոր գործուղվում է Իրան, իսկ Սեւանա լիճ լցվող գետերի, կոյուղաջրերի խնդիրները «հանդիսավորությամբ» նույնիսկ աչքի չեն անցկացնում: Հայաստանում աստիճանաբար նվազող ջրային ռեսուրսների եւ եղանակային փոփոխությունների պատճառով Սեւան լցվող 28 գետ ու գետակների մի մասը սակավացել կամ ուղղակի ցամաքել է: Հասկանալի է Արաքս գետի նշանակությունը Հայաստանի համար, սակայն առերեւույթ խնդիրները բարձիթողի վիճակում են: Սեւան լցվող գետերի հոսքը դանդաղել է, ինչի պատճառով էլ ռիսկային է դրանց ճահճացման խնդիրը, այնինչ շրջակա միջավայրի նախարարը ճամփորդում է քննարկումների անվան տակ:

## «ԾԻԾԱՂԵ՛Ք ՈՒ ԱՆՑԵ՛Ք»

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել «Հանրապետություն» կուսակցության ավագանու թեկնածու Անի Խաչատրյանի հետ, որը ոչ միայն հերքեց լուրը, այլեւ հորդորեց նման լուրերի ընդհանրապես ուշադրություն չդարձնել, պարզապես ծիծաղել ու անցնել, որովհետեւ չեն համապատասխանում իրականությանը:

«Մամուլում նմանատիպ լուրերի հանդիպելիս պարզապես ծիծաղեցի ու անցա, բնականաբար չկա նման բան, ասեմ ավելին՝ աղանդավորական կազմակերպությունները չէին կարող քվեարկել «Հանրապետություն» կուսակցության օգտին, որովհետեւ «Հանրապետություն» կուսակցությունը, բացի հայ-առաքելական եկեղեցուց, բոլոր աղանդավորական կազմակերպություններին միշտ դեմ է եղել եւ դրա մասին բազմիցս բարձրաձայնել է»,-ասաց նա:

*ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

## ԱՎԱԳԱՆՈՒ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Երեւանի ավագանու արտահերթ ընտրությունների արդյունքներով ընդդիմադիր ուժերը կարող են միավորվել եւ քաղաքապետ ընտրել, ու այս միտքը հանգիստ չի տալիս Նիկոլ Փաշինյանի թիմին: Նրանք որոշել են վերահաշվարկի համար դիմել ԿԸՀ՝ հույսով, որ այդպես գոնե կկարողանան ձայներ ավելացնել: ՔՊ-ն նաեւ հույս ունի, որ մեկ մանդատ «կգողանա» ընդդիմադիրներից, որպեսզի անհրաժեշտ քվեներ ապահովի, եւ Տիգրան Ավինյանը քաղաքապետ դառնա: Կուսակցությունը երեկ քննարկել է տարբերակ. «Հանրային ձայն» կուսակցությունը, որը 7 մանդատ է ունենալու ավագանու կազմում, ունի կալանավորված 1 անդամ: Այսինքն, փաստացի, քվեարկության կարող է մասնակցել 6 հոգի, եթե Արտակ Գալստյանը չհրաժարվի ավագանու իր մանդատից:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ Ընտրական օրենսգրքում այդ մասով որեւէ հստակեցում առկա չէ, եւ կարող է լինել երկու սցենար. կա՛մ պետք է միջնորդություն ներկայացվի նախաքննական մարմնին կամ դատախազին, որ խափանման միջոցը վերանայեն, ավագանին ներկայանա նիստին, քաղաքապետ ընտրի, կա՛մ ընտրված ավագանին պետք է հրաժարվի մանդատից, որ հաջորդ համարն ընտրվի ու մասնակցի նիստերին: Այսինքն, եթե Վարդան Ղուկասյանի ուժը ցանկանում է պահպանել այդ մեկ ձայնը, ինչը շատ կարեւոր է, ապա պետք է Արտակ Գալստյանը հրաժարվի իր մանդատից: Եթե ոչ, կստացվի, որ ՔՊ եւ «Հանրապետություն» կուսակցությունները ունեն ճիշտ այնքան մանդատ, որքան Մարության-Թեւանյան-Գալստյան դաշինքը:

Այսպիսով՝ ՔՊ-ին պակասում է 1 մանդատ, որ Ավինյանին դարձնի քաղաքապետ:

Իսկ Հայկ Մարությանը ասում է՝ կամ ինքը պետք է քաղաքապետ դառնա, կամ նոր ընտրություններ լինեն: Սպասենք զարգացումներին:

ԱՐՁԱՆԱԳՐԵԼ ԵՆ

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԸ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**ԵԽ Կոնգրեսի 9-հոգանոց դիտորդական պատվիրակությունը ավարտել է իր առաքելությունը կիրակի օրը՝ սեպտեմբերի 17-ին Հայաստանի մայրաքաղաքի 12 թաղամասերում կայացած Երեւանի ավագանու ընտրություններում:**



«Ժողովուրդ» օրաթերթը Կոնգրեսի մամուլի ծառայության տարածած հաղորդագրությունից տեղեկանում է, որ ընտրությունների օրը Կոնգրեսի յոթ թիմ՝ Կառլա Դեժոնգեի (Բելգիա, ILDG) գլխավորությամբ, այցելել է Երեւանի բոլոր թաղամասերի՝ պատահականության սկզբունքով ընտրված մոտ 113 ընտրատեղամասեր՝ այտեղ գտնվելով բացման պահից մինչեւ փակում եւ հաշվարկ: Տեղում այս առաքելությանը նախորդել էին սեպտեմբերի 15-16-ը հանդիպումները ընտրական հիմնական շահագրգիռ կողմերի, դիվանագիտական կորպուսի, լրատվամիջոցների, հասարակական կազմակերպությունների, ինչպես նաեւ ընտրություններին մասնակցող կուսակցությունների թեկնածուների հետ:

Ընդհանուր առմամբ, պատվիրակությունն արձանագրել է հանգիստ, խաղաղ եւ լավ կազմակերպված ընտրություններ՝ առանց լուրջ միջադեպերի կամ անոմալիաների:

Պատվիրակությունը նշել է, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) ներկայացուցիչների աջակցությամբ ընտրողների իսկությունը հաստատող սարքերն ու տեսախցիկները անխափան գործել են քվեարկության ողջ օրվա ընթացքում՝ նվազեցնելով կեղծիքների հնարավորությունները եւ ամրապնդելով ընտրողների վստահությունը ընտրական գործընթացի նկատմամբ:

Պատվիրակությունը ափսոսանք է հայտնել ՏԻՄ ընտրությունների նկատմամբ հատկապես երիտասարդ ընտրողների շրջանում հետաքրքրության պակասի համար, ինչը երեւում է Երեւանում երբեւէ գրանցված ամենացածր մասնակցությամբ:

«Ի լրումն՝ տեղական շահերին վերաբերող հարցերը երբեմն ստվերվում էին բազմաթիվ ընտրողների եւ մրցակիցների կողմից Լաչինի միջանցքում տիրող իրավիճակի վերաբերյալ հասկանալիորեն արտահայտված անվտանգության մտահոգությունների պատճառով: Մեզ մնում է միայն կիսել երեւանցիների մտահոգությունը եւ կոչ անել արագ կարգավորել այս իրավիճակը:

Քարոզարշավը բեւեռացված էր, այն գլխավորում էին քաղաքապետի թեկնածուները: Պատվիրակությանը զեկուցվել է իշխող կուսակցության օգտին վարչական ռեսուրսի չարաշահման եւ ԶԼՄ-ների կողմնակալության վերաբերյալ հայտարարությունների մասին: Այդ առումով եւ հավասար մրցակցային պայմաններ ապահովելու նպատակով մենք հավատում ենք պաշտոնական քարոզարշավին նախորդող ժամանակաշրջանի վերաբերյալ լրացուցիչ երաշխիքների անհրաժեշտությանը, այդ թվում՝ քարոզարշավի եւ կուսակցությունների ֆինանսավորման վերաբերյալ»:

Ինչպես ավելի վաղ Կոնգրեսը առաջարկել էր, ընտրատեղամասերի հասանելիությունը մնում է կարեւոր խնդիր, որը պահանջում է հետագա հրատապ միջոցներ:

«Մենք նշեցինք, որ կային մի քանի ոլորտներ, որտեղ, թեեւ իրավական դաշտը համարժեք էր թվում, օրենքի ոգով որոշ դրույթների իրականացումը կարող էր ավելի բարելավվել:

Օրինակ՝ թեեւ բոլոր ցուցակներում պահպանվել է կին թեկնածուների 30% քվոտան, ցուցակների ղեկավարները շատ քիչ են եղել կանայք եւ, հետեւաբար, թերներկայացված են հանրային քննարկումներում»:

Կոնգրեսի առաքելությունից հետո հանձնարարականի նախագիծը կքննարկվի Կոնգրեսի հաջորդ նստաշրջանում՝ 2023 թվականի հոկտեմբերի 25-ին Ստրասբուրգում (Ֆրանսիա)»:

ՕՐՎԱ ԽԾԱՆԿԱՐ

## ՀԱՄԱՎ ԱՐՑԱԽ

Կարմիր խաչի միջազգային կազմակերպության մեկ բեռնատար եւ երկու մարդատար ավտոմեքենաներ Աղդամով շարժվել են Ստեփանակերտի ուղղությամբ եւ արդեն հասել են Ասկերան: Այս մասին հայտնում են ադրբեջանական լրատվամիջոցները:

Նշենք, որ Արցախի իշխանությունները հայտարարել են, որ ընդունում են Լաչինի միջանցքով եւ Աղդամի ճանապարհով բեռների համաժամանակյա տեղափոխումը:

## ՄԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Հայտնի է սեպտեմբերի 17-ին տեղի ունեցած՝ Երեւանի ավագանու ընտրությունների մասնակցության ցուցանիշը: Այսպիսով, ընտրություններին մասնակցել է 234,553 քաղաքացի կամ ընտրողների միայն 28,46%-ը: Սա Երեւանի պատմության մեջ ամենացածր մասնակցության ցուցանիշն է:

Համեմատության համար նշենք, որ 2018 թվականին տեղի ունեցած թավշյա հեղափոխությունից հետո կայացած Երեւանի ավագանու ընտրություններին «Իմ քայլը» դաշինքը ստացել էր 294 092 ձայն կամ 81,06 %: Այսինքն՝ այս ընտրություններին մասնակցել է ավելի քիչ մարդ, քան 2018-ին ընտրել էր նրանց:

## ՔՊ-ԻՆ ՉԵՆ ԸՆՏՐՈՒՄ

Երեւանի ավագանու՝ սեպտեմբերի 17-ին կայացած ընտրություններին ՔՊ-ն ստացել է 75 հազար 463 ձայն:

«Ժողովուրդ» օրաթերթը համեմատական է անցկացնում նախորդ տարիների հետ:

2018 թվականի Երեւանի ավագանու ընտրություններին «Իմ քայլը» դաշինքը ստացել է 294.092 քվե:

2018 թվականի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններում Երեւան քաղաքում «Իմ քայլը» դաշինքը ստացել է 290.439:

2021 թվականի ՀՀ ԱԺ արտահերթ ընտրություններում «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը Երեւան քաղաքում ստացել է 181.180 քվե:

Այս թվերը ցույց են տալիս, թե տարեցտարի որքան է նվազում ՔՊ ընտրողների թիվը:

## ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑԻՆ

Սեպտեմբերի 11-ին ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանը հանդես էր եկել Արթուր Իվանի Հարությունյանի հրաժարականի մասին հայտարարությամբ:

Ավելի ուշ «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Արցախի Հանրապետության օրենքի 138-րդ հոդվածի 2-րդ մասի 2 կետը՝ Ազգային ժողովի նախագահ Դավիթ Իշխանյանը սեպտեմբերի 18-ին ստորագրել է արձանագրություն՝ Ֆինանսաբյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի, «Ազատ հայրենիք-ՔՄԴ» խմբակցության ղեկավարի՝ Արթուր Իվանի Հարությունյանի պատգամավորական լիազորությունների դադարման մասին:

ԶՈՐԱԿՈՉ

# ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝ ԿԱԼԱՆՔ

**«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննված քրեական վարույթով հիմնավորվել է, որ ՀՀ ՊՆ պաշտոնատար անձ Ա. Թ.-ն նորակոչիկի զորակոչը հետաձգելու համար ստացել է խոշոր չափերով՝ 10.000 ԱՄՆ դոլար կաշառք: Բացի այդ, նույն պաշտոնատար անձը, ծառայողական լիազորությունները ու դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, մեկ այլ պաշտոնատար անձի՝ Ա. Ա.-ի հետ, խմբի կազմում ստացած կաշառքի դիմաց, հետաձգել է երկու քաղաքացու՝ վարժական հավաքներին մասնակցելը: Մեկ այլ դեպքում Ա. Թ.-ն, ստանալով կաշառք, մեկ քաղաքացու էլ ազատել է վարժական հավաքներին մասնակցելուց: Այս մասին հայտնում են ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեից:**



Մասնավորապես, նախաքննությամբ պարզվել է, որ 2023 թվականի մարտին Հ. Մ.-ն իր որդուն իրականությանը չհամապատասխանող հիվանդություն ունենալու հիմքով, կաշառքի դիմաց պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ազատելու համար՝ իր ծանոթ Ա. Գ.-ի, վերջինս էլ Ռ. Ա.-ի միջոցով պայմանավորվածություն է ձեռք բերել ՊՆ պաշտոնատար անձ Ա. Թ.-ի հետ: Այդ գործընթացը կազմակերպելու համար Ա. Թ.-ն Ռ. Ա.-ի միջոցով Հ. Մ.-ից պահանջել է 3.883.000 ՀՀ դրամին համարժեք 10.000 ԱՄՆ դոլար՝ Ռ. Ա.-ին նախապես խոստանալով կաշառքի առարկա գումարը ստանալու դեպքում կաշառք ստանալու օժանդակության դիմաց դրանից 2000 ԱՄՆ դոլարը տրամադրել նրան:

2023 թվականի մարտի 30-ին Ռ. Ա.-ն Ա. Գ.-ին տեղեկացրել է, որ պաշտոնատար անձը կաշառքի գումարից նախնական 2500 ԱՄՆ դոլար է պահանջել: Ա. Գ.-ն էլ իր հերթին ստացած տեղեկությունները փոխանցել է Հ. Մ.-ին, այնուհետեւ կազմակերպել վերջինի ու Ռ. Ա.-ի հանդիպումը՝ պայմանավորվածության վերաբերյալ մանրամասները քննարկելու նպատակով: Պայմանավորվածության համաձայն՝Ռ. Ա.-ն Հ. Մ.-ից վերցրել է կաշառքի առարկայի մի մասը՝ 2500 ԱՄՆ դոլարը, որից 1000 ԱՄՆ դոլարը տվել է Ա. Թ.-ին:

Այնուհետեւ Ռ. Ա.-ն կաշառքի առարկա հանդիսացող մնացած 7500 ԱՄՆ դոլարը վերցրել է Հ. Մ.-ից, դրանից 6000 ԱՄՆ դոլարը նույն օրը տվել է Ա. Թ.-ին: Մի քանի օր անց Ռ. Ա.-ն նույն գումարից եւս 400 ԱՄՆ դոլար է տվել Ա. Թ.-ին՝ խոստանալով մնացած 600 ԱՄՆ դոլարը տալ մի քանի օրվա ընթացքում: Արդյունքում Ա. Թ.-ն փաստացի ստացել է ընդհանուր 2.874.252 ՀՀ դրամին համարժեք 7400 ԱՄՆ դոլար:

Հավելենք, որ նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել նաեւ այն մասին, որ ՊՆ վերը նշված պաշտոնատար անձը ՊՆ մեկ այլ պաշտոնատար անձի՝ Ա. Ա.-ի հետ խմբի կազմում վարժական հավաքներին մասնակցելը հետաձգելու համար երկու քաղաքացուց ստացել է 120.000-ական ՀՀ դրամ կաշառք:

Դրանցից բացի, պաշտոնատար անձ Ա. Թ.-ն իր ծանոթին վարժական հավաքների ծանուցագիր չուղարկելու եւ այդկերպ վարժական հավաքներից ազատելու համար վերջինից որպես կաշառք պահանջել է նրան պատկանող ռեստորանում 5 հոգու համար հյուրասիրություն: Ստանալով համաձայնություն՝ Ա. Թ.-ն եւ նրա հետ նույն վայրում աշխատող ՊՆ 4 այլ պաշտոնատար անձ այցելել են ռեստորան եւ Հ. Մ.-ի հաշվին ստացել հյուրասիրություն: Նախաքննության ընթացքում Ա. Թ.-ի եւ Ա. Ա.-ի նկատմամբ խափանման միջոց է կիրառվել կալանքը: Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը՝ 8 մեղադրյալների մասով մեղադրական եզրակացությամբ, հանձնվել են հսկող դատախազին՝ այն դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԿԱՐԵՎՈՐ

## ԱԱԾ-Ն ՁԵՐԲԱԿԱԼԵԼ Է



ԱԱԾ-ի կողմից ձերբակալված ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկին տեղափոխել են հիվանդանոց. վերջինս Ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի օպերատիվ խմբի բաժնի պետի օպերատիվ գծով տեղակալ Ժորա Սողոմոնյանն է:

Հիշեցնենք, որ, «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով, ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի պետ Սերգեյ Մանուկյանին, օպեր գծով տեղակալին եւ մաքսային մեկ աշխատակցի, որ ՊՆ գեներալի որդի է, ԱԱԾ- դիմակավորված անձինք ձերբակալել են:

Աշխատակիցները նրանց ձեռնաշղթաներով տարել են օդանավակայանից:

Նշենք, որ Shamshyan.com-ը նույնպես հայտնել էր, որ, կայքի տեղեկություններով, ՀՀ ազգային անվտանգության ծառայողները ՀՀ ներքին գործերի նախարարության «Զվարթնոց» գծային բաժնից ձեռնաշղթայված ԱԱԾ են տեղափոխել 2 բարձրաստիճան ոստիկանի, 1 հոգու էլ ձեռնաշղթայված վիճակով տեղափոխել են «Զվարթնոց» օդանավակայանի մաքսակետից: Մաքսակետից տեղափոխվածը նույնպես բարձրաստիճան ոստիկան է:

## ԵՐԵԽԱՆ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵՑ

Սեպտեմբերի 15-ին հայտնի դարձավ, որ Ոստիկանության Մալաթիայի բաժնի կողմից որպես անհետ կորած որոնվում է 2012 թվականին ծնված Էրիկ Ներսիսյանը: Ավելի ուշ ոստիկանությունից հայտնեցին, որ տղան հայտնաբերվել է: «Ժողովուրդ» օրաթերթին ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել:

Մասնավորապես, երեխայի ծնողները բաժանված են: Վերջինիս խնամել է տատիկը, պարբերաբար տանից դուրս է եկել ու մնացել ընկերների հետ, եղել են դեպքեր, որ մեկ օր մնացել է ընկերների տանը:

Այս անգամ էլ իրավապահները նրան հայտնաբերել են ընկերների մոտ:

Նշենք, որ Էրիկը նորմալ վարքի տեր երեխա է, պարզապես ակտիվ է շատ եւ սովորություն է ունեցել տատիկի մոտից գնալու: Տատիկը չի կարողանում վերահսկել նրան: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝այս ամենից հետո տատիկը որոշում է կայացրել երեխային տանել «Զատիկ» մանկատուն: Որոշումը կայացվել է՝ երեխայի անվտանգությունից ելնելով, որ ավելի վատ իրավիճակում չհայտնվի:

*ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ*

ՈՒՇԱԳՐԱՎ

## ԺԱՄԱՆԵՑ ԵՎ ՁԵՐԲԱԿԱԼՎԵՑ

Սեպտեմբերի 16-ին՝ ժամը 06.00-ին, «Զվարթնոց» օդանավակայանի գծային բաժնի ծառայողների ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, Վիեննա-Երեւան չվերթի ինքնաթիռի ժամանումից հետո ձերբակալվել է ԻԻՀ քաղաքացի, 1981 թվականին ծնված Սեդիղե Հ.-ն: Նա 2020 թվականի հոկտեմբերի 20-ից հետախուզվում էր ԻԻՀ Ինտերպոլի կողմից՝ այդ երկրի քրեական օրենսգրքի 1-ին հոդվածի (Խարդախությունը) մեղադրանքով:

Խափանման միջոցը՝ կալանք:

Հայտնաբերման մասին հայտնվել է Հայաստանի Հանրապետության Ինտերպոլի ԱԿԲ եւ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազին:

Սեդիղե Հ.-ն տեղափոխվել է ՁՊՎ:

## ՎԵՃՆ ԱՎԱՐՏՎԵՑ ԴԱՆԱԿԱՀԱՐՈՒԹՅԱՄԲ

Սեպտեմբերի 17-ին՝ժամը 16.50-ին, Արտաշատի քրեական հետախույզները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ Դիտակ-Ջրաշեն ճանապարհին Դիտակ գյուղի բնակիչ, 23 եւ 24 տարեկան եղբայրներ վիճաբանել են համագյուղացի 21-ամյա երիտասարդի հետ, որի ընթացքում ձեռքերով, ոտքերով ու դանակով հասցրել են հարվածներ:

Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ նույն օրը՝ ժամը 17.25-ին, հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ «կրծքավանդակի կտրածծակած թափանցող վերք, ազդրի կտրած վերք» նախնական ախտորոշմամբ, 21-ամյա երիտասարդը տեղափոխվել է բուժօգնության: Ձեռնարկված հետագա միջոցառումներով պարզվել է, որ մարմնական վնասվածքներով ավարտված վիճաբանությունը տեղի է ունեցել կրտսեր եղբորը պատկանող «ՎԱԶ-2107» մակնիշի մեքենայում: Ժամը 18.30-ին նա հայտնաբերվել է Դիտակ գյուղում, ձերբակալվել, բերվել է Արտաշատի բաժին եւ ներկայացվել Արարատի մարզային քննչական վարչություն: Մեքենան տեղափոխվել է պահպանվող հատուկ տարածք:

Բացատրական աշխատանքի արդյունքում նույն օրը՝ ժամը 20.40-ին, ավագ եղբայրն ինքնակամ ներկայացել է ոստիկանության Արտաշատի բաժին եւ խոստովանել, որ ինքն է իր մոտ եղած դանակով հասցրել հարվածներ: Նա նույնպես ներկայացվել է նախաքննական մարմին:

Եղբայրները տեղափոխվել են ձերբակալվածների պահման վայր:

Հավելենք, որ վեճի պատճառն ու դեպքի այլ հանգամանքները նախաքննությամբ պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ սեպտեմբերի 15-ից 18-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 129 դեպք, որոնցից 6-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

## ՀԱԶԻՎ Է ԳՈՅԱՏԵՒՈՒՄ

Իջեւան համայնքի Ազատամուտ գյուղում գործող բենտոնիտի կոմբինատը խորհրդային տարիներին արդյունաբերական խոշոր ձեռնարկություն էր, որն աշխատանքով ապահովում էր հարյուրավոր մարդկանց: Ազատամուտ բանվորական ավանը ստեղծվել է գործարանի հենքի վրա: Բենտոնիտի կոմբինատի արտադրանքը առաքվում էր ԽՍՀՄ բազում ձեռնարկություններ, սակայն Ադրբեջանի կողմից տրանսպորտային շրջափակումը, Իջեւան-Ղազախ երկաթգծի չգործելը մեծ դժվարություններ է առաջացրել բենտոնիտի կոմբինատի արտադրանքի առաքման համար: Փոքր հզորությամբ, ընդմիջումներով աշխատող բենտոնիտի կոմբինատն արտադրանքն առաքելիս տրանսպորտային մեծ ծախսեր է կատարում, ինչը գործարանի արտադրանքը արտերկրում, հիմնականում՝ Ռուսաստանում, ոչ մրցունակ է դարձնում: Ադրբեջանի Ղազախի շրջանում է գտնվում Իջեւանի բենտոնիտի կոմբինատի հանքավայր Սարիգյուղի բենտոնիտային կավերի հանքի շարունակությունը: Ղազախի շրջանի Դաշ Սալահլի գյուղում բենտոնիտի հսկա գործարան են կառուցել եւ բենտոնիտային կավը երկաթուղիով արտահանում են Ռուսաստան: Նրանք գրավել են Ռուսաստանի շուկան, իսկ Ազատամուտի բենտոնիտի կոմբինատը հազիվ է գոյատեւում, գործարանի սպառած էլեկտրական հոսանքի գումարը մի կերպ փակում:

## ՄԱՐԶՊԵՏԻ ԱՆՈՐՈՇ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանն օգոստոսի 29-ին նիստ է անցկացրել Տավուշի մարզում անտառային եւ բուսածածկ տարածքների հնարավոր հրդեհավտանգ իրավիճակների մշտադիտարկման, հրդեհների կանխարգելման, անհրաժեշտ կարողությունների գնահատման, արագ արձագանքման, հրդեհների դեմ պայքարի, դրանց տարածման կանխման, ինչպես նաեւ դրանց հետեւանքների վերացմանն ուղղված միջոցառումների իրականացման նպատակով ստեղծված աշխատանքային խմբի հետ, քննարկվել են անտառային հրդեհների, փայտածուխի արտադրման հետ կապված հարցեր: Մարզպետ Հ. Ղալումյանին «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկատվական հարցում է ուղարկել՝ հետաքրքրվելով, թե Տավուշի մարզի համայնքներում փայտածուխի քանի արտադրամաս է գործում, դրանցից քանիսն է համապատասխանում բնապահպանական եւ հակահրդեհային կանոններին: Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշմամբ 2021թ. ապրելի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումանը, հարցին կոնկրետ պատասխանելու փոխարեն, խուսափողական, անորոշ պատասխան է տվել՝ հայտնելով. «Մարզում գործում են փայտածուխի արտադրամասեր, որոնց թիվը հստակ չենք կարող ասել, քանի օր ամենօրյա փոփոխությունների են ենթարկվում՝ կապված գործունեության դադարեցման հետ: Այն արտադրամասերը, որոնք չեն համապատասխանում բնապահպանական եւ հակահրդեհային կանոններին, ենթարկվում են վարչական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով»:

*ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ*
*Տավուշ*

ԱՄՓՈՓՈՒՄ

# ԾԱԽՍԱԾ ՄԻԼԻՈՆՆԵՐՆ ՈՒ ՁԱՅՆԵՐԸ

**Ամփոփելով ընտրությունների վերջնարդյունքները՝ «Ժողովուրդ» օրաթերթը համեմատել է, թե մասնակիցների կատարած ծախսերը որքան ձայներ են բերել նրանց:**




«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ներկայացրել է 269 միլիոն 247 հազար 240 դրամ, որից ծախսել է 263 միլիոն 192 հազար 519 դրամը, սակայն արդեն պարզ դարձավ, որ նույնիսկ նման միլիոնները բավական չեն ընտրություններում հաղթելու համար: Նույնիսկ այդ ֆինանսներով, վարչական ռեսուրս օգտագործելով՝ հաղթանակի հասնել չստացվեց: Նախընտրական քարոզարշավի վերջին օրը կայացած հանրահավաքին մարզերից մարկանց բերելը եւ հնդիկներին ներգրավելը եւս չօգնեց հաղթել:

«Ապրելու երկիր» կուսակցությունը ներկայացրել է 91 միլիոն 93 հազար դրամ, որից ծախսել է 87 միլիոն 926 հազար 310 դրամ: Կուսակցությունը եւս ծախսել է միլիոններ, եւ այդ միլիոնները «Ապրելու երկրին» բերել են 8425 ընտրող՝ ընտրողների ընդհանուր թվի 3.64%-ը:

«Մայր Հայաստան» դաշինքը ներկայացրել է 48 միլիոն 609 հազար 500 դրամ, որից ծախսել է 41 853 հազար 560 դրամ, եւ այդ միլիոնները նրան բերել են 35 739 ընտրող՝ընտրողների 15.43%-ը:

«Հանրապետություն» կուսակցությունը ներկայացրել է 32 միլիոն 672 հազար 600 դրամ, որն ամբողջությամբ ծախսել է: Ֆինանսական միջոցները ամբողջությամբ սպառած կոսակցությունը ստացել է 26 236 ձայն `11.32%-ը:

«Ուժը հայրենյաց» կուսակցությունը ներկայացրել է 32 միլիոն 400 հազար դրամ, որից ծախսել է 32 միլիոն 389 հազար 600 դրամը: Ներկայացրած ֆինանսական միջոցներից 11 հազար դրամ խնայած կուսակցությունը ստացել է 1706 ձայն՝0.74%-ը:

«Լուսավոր Հայաստան» կուսակցությունը ներկայացրել է 13 միլիոն 100 հազար դրամ, որից ծախսել է 12 միլիոն 256 հազար 858 դրամ: Ֆինանսական միջոցներից գրեթե մեկ միլիոն խնայած կուսակցությունը ստացել է 4174 ձայն՝ 1.8%: «Ժողովրդավարական համախմբում» կուսակցությունը ներկայացրել է 11 միլիոն 350 հազար դրամ, որից ծախսել է 11 միլիոն 303 հազար դրամը: 47 հազար դրամ խնայած այս կուսակցությունը ստացել է 2348 ձայն՝1.01%-ը:

«Ազգային առաջընթաց» կուսակցությունը ներկայացրել է 10 միլիոն 432 հազար 500 դրամ, որից ծախսել է 8 միլիոն 864 հազար 144 դրամ: Գրեթե 2 մլն խնայած «Ազգային առաջընթաց»-ը ստացել է 43 765 ձայն՝18.89%:

«Միացյալ Հայաստան» կուսակցությունը ներկայացրել է 6 միլիոն 400 հազար դրամ, որից ծախսել է 6 միլիոն 185 հազար 820 դրամ: 214 հազար դրամ խնայած «Միացյալ Հայաստան» կուսակցությունը ստացել է 1282 ձայն՝0.55%-ը:

«Հանրային ձայն» կուսակցությունը ներկայացրել է 4 միլիոն 821 հազար դրամ, որից ծախսել է 4 միլիոն 250 հազար 560 դրամ: 571 հազար դրամ խնայած կուսակցությունը հայտնվել է առաջին հնգյակում՝ հավաքելով ընտրողների ընդհանուր թվի 9.68%-ը՝22 431 ձայն:

«Հաղթանակ» կուսակցությունը ներկայացրել է 1 միլիոն 20 հազար դրամ, որից ծախսել է 998 միլիոն 200 հազար դրամ: 21 հազար 800 դրամ խնայած «Հաղթանակ» կուսակցությունը ստացել է 3959 ձայն՝1.71%-ը:

«Հանուն սոցիալական արդարության» կուսակցությունը ներկայացրել է 250 հազար դրամ, որից ծախսել է 230 հազար դրամ: Խնայելով 20 հազար դրամ՝ այն ստացել է 780 ձայն՝0.34%-ը:

Հայաստանի եվրոպական կուսակցությունը մուծումներ եւ ծախսեր չի կատարել:

*ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ*

ՀԵՏԱՔՐՔԻՐ

# ԿԳՈՐԾԻ «Wildberries»-Ի ՓՈԽԱՐԵՆ

**Ռուսական Ozon-ից հայտնում են, որ օնլայն ռիթեյլերը մեկնարկել է վաճառքները Հայաստանի բնակիչների համար. հաճախորդներին հասանելի կլինի ռուսական շուկայի գրեթե ողջ տեսականին:**

«Հայաստանի բնակիչներն արդեն կարող են ապրանքներ գնել Ռուսաստանից Ozon-ով: Նրանց հասանելի է ռուսական շուկայի գրեթե ողջ տեսականին՝ 196 միլիոն ապրանքատեսակ ավելի քան 20 կատեգորիայում՝ գրքերից եւ հագուստից մինչեւ սննդամթերք ու առողջապահական ապրանքներ»,-այս մասին հայտնում է ընկերության մամուլի ծառայությունը:

Սկզբում Ozon-ը նախատեսում էր մուտք գործել հայկական շուկա 2023 թվականի ուշ աշնանը, սակայն գործընթացն ավելի արագ տեղի ունեցավ, քանի որ հայաստանյան ներկայացուցիչները սկսել են տիրապետել ապրանքների՝ հակառակ ուղղությամբ առաքմանը:

Forbes-ին տված հարցազրույցում ԱՊՀ-ում Ozon-ի գործառնությունների եւ զարգացման տնօրեն Ալեքսեյ Սապոնը նշեց, որ Ozon-ի առավելությունը լայն տեսականին է. վիրտուալ ցուցափեղկի վրա ապրանքների ընտրությունը շատ ավելի լայն է, քան սովորական մանրածախ խանութում.

«Մենք ցանկանում ենք ուժեղացնել մեր ենթակառուցվածքը տարբեր երկրներում, որպեսզի նույնիսկ Հայաստանի ամենահեռավոր անկյունների բնակիչները կարողանան առցանց պատվիրել եւ ընտրել ապրանքներ բազմազան տեսականուց»:

Ozon-ը նաեւ կպարզեցնի պատվերների տրամադրման կետերի տարածքների համար նախատեսված պահանջները եւ կդիտարկի հաճախորդին հարմար եւ մոտ տարածքների մեծ մասը: Միաժամանակ բոլոր կետերը բրենդավորված կլինեն ընկերության կորպորատիվ ոճով, կահավորված կլինեն հանդերձարաններով, իսկ առաքման միջին ժամկետը մոտ մեկ շաբաթ է:

«Մենք տեսնում ենք, որ հաճախորդները սիրում են պատվերները ստանալ պատվերների տրամադրման կետերից: Դրանք օգտագործվում են շուկայում 10 պատվերներից 8-ի համար:

Բացի այդ, տեսնում ենք Հայաստանում ձեռնարկատերերի հետաքրքրությունն այս ոլորտի զարգացման նկատմամբ, ուստի որոշել ենք աննախադեպ ժամանակում երկրում գործարկել ծրագիր՝ պատվերների տրամադրման կետերի սեփականատեր-գործընկերներին աջակցելու համար»,- ասում է ԱՊՀ-ում Ozon-ի գործընկեր-լոգիստիկ ծրագրերի զարգացման տնօրեն Հարություն Գաբրիելյանը:

Ozon-ը զարգացնում է բիզնեսը եւ կառուցում է իր լոգիստիկ ենթակառուցվածքը Բելառուսում, Ղազախստանում, Ղրղզստանում եւ Հայաստանում:

*ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 45 ՃՏՊ. 6 մարդ զոհվել է, 60-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

## ԱՃՈՒՐԴ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 09.10.2023 թվականին ժամը 15:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍնԴ/0719/04/20 սնանկության գործով 04.09.2020 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «Մուռմել-Արմանի» ՍՊԸ ստորեւ նշված շարժական գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 2 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2004թ. արտադրության, 632 US 65 պետհամարանիշով, նարնջագույն, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ15M400073, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 5,117,580 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «LECITRAILER» մակնիշի, D 2440 տիպարի, 2000թ. արտադրության, 228 L 01 պետհամարանիշով, գույնը՝ սպիտակ, թափքի տեսակը՝ սառնարան, ՏՄ տեսակը՝ կիսակցորդը (նույնացման համար՝ VV1F3FA1XSN097823, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 5,839,290 ՀՀ դրամ:

Լոտ 4 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18.430 տիպարի, 2006թ. արտադրության, 090 PP 96 պետհամարանիշով, գույնը՝ դեղին, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH13ZZ97M464106, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 5,904,900 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապանին սեփականության իրավունքով պատկանող եւ վերջինիս կողմից իր պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված «MAN» մակնիշի, TGA-18-430 տիպարի, 2005թ. արտադրության, 756 US 65 պետհամարանիշով, գույնը՝կարմիր, թափքի տեսակը՝ թամբային քարշակ, ՏՄ տեսակը՝ բեռնատար ավտոմեքենան (նույնացման համար՝ WMAH06ZZ85M423273, գտնվելու վայրը՝ Վրաստանի հանրապետություն): Մեկնարկային գին՝ 5,576,850 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝ դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/ աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «Մուռմել-Արմանի» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480103421570000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս քան երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (էլ. Փոստ՝ makaryeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

«Ատաստ Ֆուդ» ՍՊԸ-ին պատկանող՝ ստորեվ նշված շարժական եվ անշարժ գույքերը հրապարակային սակարկություններով (աճուրդ) վաճառելու մասին

«ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանի կողմից 09.10.2023 թվականին ժամը 14:00-ին ք. Երեւան, Ադոնցի 6/1, 303 հասցեում կանցկացվի ՀՀ Սնանկության դատարանի թիվ ՍնԴ/0888/04/21 սնանկության գործով 24.05.2021 թվականին կայացված վճռով սնանկ ճանաչված «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ-ի ստորեւ նշված շարժական եւ անշարժ գույքերի հրապարակային սակարկություններով վաճառքը հետեւյալ լոտերով.

Լոտ 1- Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ,Վարսեր համայնքի տարածք հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2480935:

Մեկնարկային գին՝ 1,317,703 ՀՀ դրամ:

Լոտ 3 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԲԸ օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, Աղբերք համայնք, փող. 13, հողամաս 11 բնակավայրի հող հասցեում գտնվող անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝2626848:

Մեկնարկային գին՝457,536 ՀՀ դրամ:

Լոտ 5 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված, եւ Տարոն Արտուշի Ղուկասյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, Մյասնիկյան 3 նրբ., թիվ 24,26 հասցեում գտնվող տնամերձ հողամաս անշարժ գույքը, սեփականության իրավունքի վկայական՝ 2290379:

Մեկնարկային գին՝560,481 ՀՀ դրամ:

Լոտ 19 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված կաթսայատուն ընդհ. (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝122,038 ՀՀ դրամ:

Լոտ 20 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լվացման հոսքագիծ (տեխնիկական վիճակը՝անսարք)

Մեկնարկային գին՝108,478 ՀՀ դրամ:

Լոտ 26 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված միրգ տրորող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝13,559 ՀՀ դրամ:

Լոտ 27 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ջարդիչ (տեխնիկական վիճակը՝անսարք)

Մեկնարկային գին՝9,491 ՀՀ դրամ:

Լոտ 32 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված թրթուրավոր շղթա (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝32,543 ՀՀ դրամ:

Լոտ 35 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված հյութ լցնող սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝40,679 ՀՀ դրամ:

Լոտ 36 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ պատկանող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված լաբորատոր սարք (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝13,559 ՀՀ դրամ:

Լոտ 37 - Պարտապան «ԱՏԱՍՏ ՖՈՒ,անող եւ վերջինիս պարտավորությունների կատարման ապահովման նպատակով Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամի օգտին գրավադրված ավտոկլավ փոքր երկու հատ (տեխնիկական վիճակը՝բավարար)

Մեկնարկային գին՝35,255 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն՝

ա/ ֆիզիկական անձանց դեպքում՝ անձնագրի պատճենը,

բ/իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի դեպքում՝դրանց պետական գրանցում հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ/աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումները հավաստող փաստաթղթերը (անդորրագրերը):

Աճուրդում ներկայացված բոլոր գույքերի վրա առկա են «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված սահմանափակումներ եւ հանդիսանում են գրավի առարկաներ:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք աճուրդին մասնակցելու համար կարող են աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ներկայացնել ՀՀ սնանկության դատարան սույն հայտարարությունը հրապարակվելուց հետո մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Աճուրդին մասնակցելու ցանկություն ունեցող անձինք վճարում են մասնակցության վճար եւ նախավճար, որոնք կազմում են տվյալ լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 (ոչ ավել քան 10,000 ՀՀ դրամը) եւ 5 տոկոսները: Մասնակցության վճարը եւ նախավճարը ենթակա են վճարման «ԱՏԱՍՏ ՖՈՒԴ» ՍՊԸ սնանկության գործով թիվ 2480102725520000 «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ հատուկ հաշվին՝ մինչեւ աճուրդի մասնակցության հայտ(եր)ը ՀՀ սնանկության դատարան ներկայացնելը:

Սույն հայտարարությամբ նախատեսված աճուրդի օրը կարող է փոխվել եւ/կամ հետաձգվել՝ այդ մասին աճուրդի օրվանից ոչ պակաս երեք օր առաջ համապատասխան հայտարարություն կատարելու միջոցով:

Աճուրդն անցկացվելու է բաց դասական (գնի ավելացման) եղանակով, հետեւաբար աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին վճարող մասնակիցը:

Աճուրդում հաղթող ճանաչվելու դեպքում, լոտի արժեքը ենթակա է վճարման աճուրդն անցկացնելու օրվանից 10 (տասը) օրյա ժամկետում սնանկության հատուկ հաշվին լոտի գնման գինը՝հաշվանցելով նախօրոք վճարած նախավճարը:

Աճուրդում հաղթող համարվող անձի հետ առուվաճառքի պայմանագրի կնքման, դրանից ծագող իրավունքների պետական գրանցման, գույքը գնորդին փոխանցելու եւ պայմանագրից բխող բոլոր անհրաժեշտ ծախսերը ենթակա են կատարման աճուրդում հաղթող համարվող անձի կողմից:

Աճուրդի անցկացման, լոտի ծանոթացման եւ ուսումնասիրության համար դիմել սնանկության գործով կառավարիչ Մակար Եղիազարյանին (հեռ.՝ 060 500 250, էլ. Փոստ՝ makar.yeg@gmail.com)՝ աշխատանքային օրերին 11:00-16:00-ն ընկած ժամանակահատվածում:

Գ.

## ՀԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«ԲիԷսԹի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ-ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտը.

- ք. Երեւան, Աջափնյակ, Էստոնական փողոց, 9 շենք, 28 հասցեում գտնվող 70,3 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝31540000 ՀՀ դրամ :

Լոտի նկատմամբ սահմանափակումները՝ գույքը գրավադրված է:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 05.10.2023թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝ 06.11.2023թ.-ին: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղում՝ աճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեով եւ ծանոթանալ լոտի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llձbst.aշ, www.borsa.am կայքերը:

Գ.

## ԵԼՈՒՅԹ

# ԷՐԴՈՂԱՆԸ՝ ԱՄՆ-Ի ՄԱՍԻՆ

**Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարել է, որ կան խմբեր, որոնք ցանկանում են «թունավորել» Անկարայի եւ Վաշինգտոնի հարաբերությունները:**

«ՌԻԱ Նովոստի»-ի փոխանցմամբ՝ Էրդողանը ելույթ է ունեցել Նյու Յորքում Թուրք-ամերիկյան ազգային ղեկավար կոմիտեի (TASC) կազմակերպած ընթրիքի ժամանակ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային իր մասնակցության շրջանակներում:

«Այստեղ պահպանելով ձեր ինքնությունը՝ դուք (ԱՄՆ-ում ապրող թուրքերը) կամուրջներ եք կառուցում մարդկանց միջեւ՝ ծանոթացնելով ամերիկացիներին մեր մշակույթին: Հաղթանակի ճանապարհն անցնում է միասնությամբ, համերաշխությամբ: Կան շահագրգիռ խմբեր, որոնք ցանկանում են թունավորել թուրք-ամերիկյան հարաբերությունները: Մենք նրանց համար պատնեշ ենք դնելու»,- ասել է Թուրքիայի ղեկավարը: Էրդողանը նշել է, որ Անկարայի ու Վաշինգտոնի հարաբերություններն ամեն օր բարելավվում են: Նրա խոսքով՝ ինքն ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի հետ պայմանավորվել է շարունակել «ամրապնդել բարեկամությունն ու համագործակցությունը»:

Ավելի վաղ Թուրքիայի ղեկավարը Վիլնյուսում կայացած գագաթնաժողովում ԱՄՆ նախագահ Ջո Բայդենի հետ հանդիպման ժամանակ հայտարարել էր Անկարայի եւ Վաշինգտոնի հարաբերություններում նոր փուլի մասին:

*ՕՖԵԼՅԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

# ԹԻՄԱՅԻՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄ՝ ԱՌԱՋԻՆԸ

**«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ Հայաստանի տղամարդկանց հավաքականը Սաուդյան Արաբիայի մայրաքաղաք Էր-Ռիադում անցկացված ծանրամարտի աշխարհի առաջնության թիմային հաշվարկում զբաղեցրել է առաջին հորիզոնականը:**



Հիշեցնենք՝ Հայաստանի տղամարդկանց հավաքականը երկամարտի երկու մեդալ է նվաճել ԱԱ-ում: 67 կգ քաշային Գոռ Սահակյանը երկամարտի 312 կգ (142+170) արդյունքով դարձել է աշխարհի 88-րդ առաջնության բրոնզե մեդալակիր, իսկ գերծանր քաշային Վարազդատ Լալայանը կարիերայում երկրորդ անգամ հռչակվել է աշխարհի փոխչեմպիոն՝ երկամարտի 460 կգ արդյունքով:

Գոռ Սահակյանը նաեւ փոքր բրոնզե մեդալ է նվաճել «Պոկում» վարժությունում, իսկ Լալայանը «Պոկում» եւ «Հրում» վարժություններում է արժանացել փոքր բրոնզե մեդալների:

Հայաստանի մյուս ներկայացուցիչները գրանցել են հետեւյալ արդյունքները՝

● Աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր, Եվրոպայի չեմպիոն ու ռեկորդակիր Անդրանիկ Կարապետյանը 89 կգ քաշայինների պայքարում երկամարտի 377 կգ արդյունքով զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը (175 + 202 կգ): «Պոկում» վարժությունում գլխավերեւում պահելով 175 կգ կշռող ծանրաձողը՝ Կարապետյանն արժանացել է այս վարժության փոքր ոսկե մեդալին:

● 81 կգ քաշայինների պայքարում Եվրոպայի գործող չեմպիոն Ռաֆիկ Հարությունյանը, «Պոկում» վարժությունում գլխավերեւում պահելով 162 կգ ծանրաձողը, նվաճել է փոքր բրոնզե մեդալ:

● Եվրոպայի գործող չեմպիոն Գարիկ Կարապետյանը երկամարտի 393 կգ (183+210 կգ) արդյունքով գրավել է 5-րդ տեղը: «Պոկում» վարժությունում Կարապետյանը գլխավերեւում պահել է 183 կգ ծանրաձողը, նվաճել փոքր արծաթե մեդալ եւ սահմանել երիտասարդների աշխարհի ռեկորդ: Երկամարտի արդյունքով եւս Կարապետյանը երիտասարդների աշխարհի ռեկոդ է սահմանել:

● Եվրոպայի կրկնակի չեմպիոն, աշխարհի առաջնության բրոնզե մեդալակիր Սամվել Գասպարյանը երկամարտի 394 կգ (178+216 կգ) արդյունքով զբաղեցրել է 4-րդ հորիզոնականը:

● Աշխարհի ու Եվրոպայի չեմպիոն Հակոբ Մկրտչյանը երկամարտի 372 կգ արդյունքով զբաղեցրել է 6-րդ (164+208 կգ), իսկ Եվրոպայի կրկնակի չեմպիոն Դավիթ Հովհաննիսյանը՝ 9-րդ հորիզոնականը՝ երկամարտի 368 կգ արդյունքով (168+200 կգ):

● Հայաստանի մյուս ներկայացուցիչ, աշխարհի ու Եվրոպայի կրկնակի չեմպիոն, Օլիմպիական խաղերի արծաթե մեդալակիր Սիմոն Մարտիրոսյանը զբաղեցրել է 5-րդ հորիզոնականը՝ երկամարտի 450 կգ արդյունքով (200+250 կգ): «Հրում» վարժությունում Մարտիրոսյանը փոքր արծաթե մեդալ է նվաճել:

Հիշեցնենք՝ աշխարհի 88-րդ առաջնությանը 120 երկրների ավելի քան 700 մարզիկ-մարզուհիներ էին հայտավորված:

Ծանրամարտի աշխարհի առաջնությունը վարկանիշային էր Փարիզի 2024 թվականի օլիմպիական խաղերի համար:

ԿԱՅԱՑԱՎ

# ՋԱԶՄԵՆՆԵՐԻ ԵԼՈՒՅԹԸ՝ ՀԱՄԵՐԳԻՆ

**Ջազային կատարումներով հայ եւ ռուս երաժիշտների հայտնի ստեղծագործությունները հնչել են Մոսկվայի 876-ամյակի առթիվ կազմակերպված տոնական համերգի ընթացքում:**

«Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ երեկոյի ընթացքում հանդիսատեսին իրենց վիրտուոզ կատարումներով ներկայացան ՀՀ ժողովրդական արտիստ Լեւոն Մալխասյանը (Մալխաս), Գարիկ Սարիբեկյանը (ստեղներ), Նիկողայոս Վարդանյանը (կոնտրաբաս), Արամ Վարդանյանը (կիթառ), Սերժ Նահապետյանը եւ Ալեքսանդր Արամյանը (հարվածային գործիքներ):

Համերգային ծրագրում առանձնահատուկ տեղ էին գրավում Արամ Խաչատրյանի երաժշտության իմպրովիզացիաները, որի 120-ամյակը այս տարի առանձնահատուկ շուքով նշվեց Հայաստանում եւ Ռուսաստանում:

«Արամ Խաչատրյանը շատ էր հետաքրքրվում ջազով եւ հեռավոր 1930-ականների վերջին հաճախում էր Արտեմի Այվազյանի ղեկավարությամբ հայտնի ջազ նվագախմբի փորձերին: Ես նույնիսկ դրա մասին վկայող լուսանկար ունեմ: Ավելին՝ Խաչատրյանն իր ստեղծագործություններում հաճախ է օգտագործել ջազային տարրեր: Ինձ համար մեծ պատիվ է մասնակցել այս գեղեցիկ համերգին, որտեղ կոմպոզիտորի հոբելյանի տոնակատարությունը զուգակցվել է Մոսկվայի տարեդարձի հետ, որտեղ երկար տարիներ ապրել եւ ստեղծագործել է Արամ Խաչատրյանը»,- նշեց ջազմեն Լեւոն Մալխասյանը (Մալխաս):

«Ականատես եղա հետաքրքիր համերգի, որտեղ հնչեցին Արամ Խաչատրյանի ստեղծագործությունները՝ ջազային մեկնաբանությամբ: Մեծ հաճույք եմ ստացել: Ուրախ եմ, որ այս դժվարին ժամանակներում հնարավորություն ունեցանք նման հրաշալի երաժշտություն լսել մեր ջազային վիրտուոզների կատարմամբ»,- նշեց ՀՀ վաստակավոր արտիստ Ալլա Լեւոնյանը: Նշենք, որ երեկոյի ընթացքում տեղի ունեցավ նաեւ ռուսաց լեզվի եւ գրականության հանրահռչակման համար ամենամյա մրցանակի հանձնման արարողությունը: Այն 2022-ից հանձնվում է Հայաստանի բուհերի ուսանողներին, որոնք իրենց ներդրումն են ունենում հայ-ռուսական մշակութային եւ կրթական երկխոսության զարգացմանը նպաստող նախագծերում: Այս տարի այն ստացավ ԵՊՀ Իջեւանի մասնաճյուղի ուսանողուհի Ռուզաննա Միխիթարյանը:

Մոսկվայի 876-ամյակին նվիրված միջոցառումներն անցկացվում էին օգոստոսի 31-ից սեպտեմբերի 17-ը:

ՍՊՈՐՏ

## ՄԵԴԱԼՈՎ ԵՆ ՎԵՐԱԴԱՐՁԵԼ

Հայ բռնցքամարտիկները մեդալներով են վերադառնում Հունաստանում կայացած միջազգային մրցաշարից: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են ՀԲՖ մամուլի ծառայությունից: Հայ մարզիկներից իրենց բոլոր մրցակիցներին հաղթել ու պատվո հարթակի ամենավերին աստիճանին են կանգնել Անի Հովսեփյանը, Արթուր Բազեյանը, Գուրգեն Մադոյանը եւ Ռաֆայել Հովհաննիսյանը, իսկ Բարեղամ Հարությունյանը վնասվածքի պատճառով բավարարվել է բրոնզե մեդալով:

Մեր բռնցքամարտիկները Հունաստանի մրցաշարին մասնակցում էին մարզիչներ Արման Հարությունյանի եւ Վաչե Վարդայանի գլխավորությամբ:

Թիմի հետ մրցավայրում էր նաեւ ֆեդերացիայի առաջին փոխնախագահ Սամվել Գասպարյանը:

## ՖՐԱՆՍԻԱՑԻ ՆՈՐԵԿԸ

Երեւանի «Արարատը» պայմանագիր է կնքել ֆրանսիացի կիսապաշտպան Կլեման Լերնոյի հետ:

Կլեման Լերնոն ծնվել է 2003 թվականի փետրվարի 13-ին: 20-ամյա ֆուտբոլիստը հանդես է գալիս կենտրոնական կիսապաշտպանի դիրքում. հաղորդում է երեւանյան ակումբի մամուլի ծառայությունը: Նա «Արարատ» է տեղափոխվել ֆրանսիական «Նանսի» ակումբից, որի երկրորդ թիմի կազմում անցկացրած 40 խաղում դարձել է 9 գոլի եւ 4 գոլային փոխանցման հեղինակ:

Լերնոն նաեւ 7 հանդիպում է անցկացրել Ֆրանսիայի մինչեւ 16 տարեկանների հավաքականի կազմում:

Կլեման Լերնոն «Արարատ»-ում կխաղա 8 համարի մարզաշապիկով:

## ԲԱՑ ԿԹՈՂՆԻ ԽԱՂԸ

Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայի» գերմանացի գլխավոր մարզիչ Թոմաս Տուխելը բաց կթողնի Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի առաջին տուրի հանդիպումն անգլիական «Մանչեսթեր Յունայթեդի» դեմ. հաղորդում է ESPN-ը:

Տուխելը որակազրկվել էր անցած մրցաշրջանում «Մանչեսթեր Սիթիի» դեմ քառորդ եզրափակիչի պատասխան խաղում (1:1) ստացած կարմիր քարտի պատճառով:

«Բավարիա» - «Մանչեսթեր Յունայթեդ» հանդիպումը տեղի կունենա սեպտեմբերի 20-ին:

## ՎՆԱՍՎԱԾՔ ՍՏԱՑԱՎ

«Ալ Հիլյալի» 31-ամյա բրազիլացի հարձակվող Նեյմարը վնասվածք է ստացել Սաուդյան Արաբիայի առաջնությունում նորամուտի խաղում. հաղորդում է Goal.com-ը: Նա չի կարողանա մասնակցել Ասիայի չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի առաջին տուրի խաղին:

Սաուդյան Արաբիայի առաջնության 6-րդ տուրի խաղում «Ալ Հիլյալը» 6:1 հաշվով հաղթել էր «Ալ Ռիյադին», Նեյմարը դարձել էր գոլային փոխանցման հեղինակ:

*● Սեպտեմբերի 20-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Հավերժի ճամփորդը. Հ. Թումանյան» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝2000-2500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

# ԵՂԵ՜Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

## ԶՈՐԱԿՈՉ

**ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է ընթանում պարտադիր զինվորական ծառայության զորակոչի վիճակահանությունը:**

*Տիգրան Հարությունյան (26 տարեկան)*




**ՊԱՏԱՍԽԱՆ.** ՀՀ կառավարության՝ 04.10.2018թ. N 1132-Ն որոշման 26-րդ հոդվածի 1-ին եւ 6-րդ մասերի համաձայն՝ հայտարարված զորակոչի շրջանակներում շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիներին հանրապետական հավաքակայանում կենտրոնացված ձեւով եւ վիճակահանությամբ (բացառությամբ օրենքի 26-րդ հոդվածի 5-րդ մասում նշված քաղաքացիների) ըստ զորամասերի ծառայության նշանակման գործընթացն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով: Հանրապետական հավաքակայանում ուսումնասիրվում են հանրապետական հավաքակայան ներկայացված քաղաքացիների վերաբերյալ ՀՀ կառավարության՝ 04.10.2018թ. N 1132-Ն որոշման 26-րդ հոդվածի 31-րդ կետում նշված անհրաժեշտ փաստաթղթերի եւ տեղեկությունների առկայությունը, ինչպես նաեւ առողջական վիճակը, որի արդյունքներով անհրաժեշտ փաստաթղթերի եւ (կամ) տեղեկությունների ոչ լիարժեք լինելու կամ քաղաքացու առողջական վիճակը զորակոչվելու համար խոչընդոտ հանդիսանալու դեպքում քաղաքացին կարող է վերադարձվել տարածքային ստորաբաժանում:

*ՀՀ ՊՆ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Պարտադիր զինծառայողների՝ ըստ զորամասերի ծառայության նշանակվելուց հետո զինված ուժերի գլխավոր շտաբի անձնակազմի կառավարման գլխավոր վարչության համապատասխան տարածքային ստորաբաժանումներ է ուղարկվում զորակոչված անձանց անվանացուցակը՝ նշանակված զորամասերի պայմանական համարների գրառումներով: Ստացված անվանացուցակները տարածքային ստորաբաժանումներն անհապաղ փակցնում են քաղաքացիների համար տեսանելի վայրերում:

## ՄՇԱԿՈՒՅԹ

**ՀԱՐՑ. Մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ի՞նչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:**

*Ժաննա Գրիգորյան (47 տարեկան)*



**ՊԱՏԱՍԽԱՆ.** Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը՝ բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում:

*ՀՀ ԿԳՄՍՆ*

**«ԺՈՂՈՎՈՒՐԴ».** Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

## ԼՈՒՐ ԿԱԴՐ

*Լուսանկարն արվել է Երեւանում*



Սեպտեմբերի 17-ին տեղի ունեցան Երեւանի ավագանու ընտրությունները: Օգոստոսի 23-ից սկսած՝ մայրաքաղաքում եռում էր քարոզարշավը, իսկ արդեն սեպտեմբերի 16-ին լռության օր էր:

Ընտրություններից անմիջապես մեկ օր անց քաղաքում սկսվեցին հեռացվել նախընտրական պաստառները:

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել

**«Հայմամուլ» ՓԲԸ**
հեռ. 45-82-00, 45-19-11

**«Հայփոստ» ՊՓԲԸ**
հեռ. 51-45-46, 51-45-47

**«Բլից-Մեդիա» ՍՊԸ**
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:




Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

## ԱՌԱՋԱՐԿ
## հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

### Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ____________

*Հեռ.՝(060) 490049*
*0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.*

## ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ




| | | |
|---|---|---|
| | Շիրակ | + 2 +7<br>+18 + 23 |
| | Կոտայքի լեռներ | + 2 + 6<br>+17 + 20 |
| | Կոտայքի նախալեռներ | +11 + 13<br>+21 + 24 |
| | Գեղարքունիք | + 4 + 8<br>+16 + 19 |
| | Լոռի | + 4 + 9<br>+15 + 19 |
| | Տավուշ | + 7 + 12<br>+19 + 22 |
| | Արագածոտնի լեռներ | + 2 + 5<br>+16 + 19 |
| | Արագածոտնի նախալեռներ | +9 + 12<br>+25 + 27 |

| | | |
|---|---|---|
| | Արարատ | +12 + 14<br>+25 + 27 |
| | Արմավիր | + 9 + 12<br>+24 + 27 |
| | Վայոց ձորի լեռներ | + 2 + 5<br>+17 + 21 |
| | Վայոց ձորի նախալեռներ | +10 + 13<br>+25 + 26 |
| | Սյունիքի հովիտներ | +9 + 13<br>+18 + 21 |
| | Սյունիքի նախալեռներ | + 6 + 12<br>+13 + 16 |
| | ԼՂՀ | +9 + 13<br>+18 + 21 |
| | Երեւան | +12 + 14<br>+24 + 26 |

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.9.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
**ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ**

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*